ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Նոցին Կայսերական Մեծութեանց Թագաւոր Կայսեր և Թագուհի Կայսրուհու Թագաղրութեան ասնի առթիւ Վեհափառ Հայրապետի շնորհաւորական հեռագրին ի պատասխան ստացուեց հետեւեալ հեռագիրը.

Նոր Պետերսբուրգ 1903 մայիս 17

ԷՋՄԻԱԾԻՆ

Պատրիարք Կաթուղիկոսին ամենայն Հայոց.

Կայսրուհին և Ես *շնորհակալութիւն զգէնք ի սրտէ յաղագս աղօթիցն և բարեմաղթութեանց.*

Նիկոլայ.

Նորին Վեհափառութեան հեռագիրն էր.

14 մայիս 1903.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսեր.

Ցերջանկաբեր աւուրս բարեբաստիկ տարեդարձի Սրբազան Թագաղրութեան Ձերդ Կայսերական Մեծութեան, *Ես, իբրև գլուխ Եկեղեցւոյս Հայաստանեայց և անձնուէր հպատակ* Գահին Ռուսիոյ, *ի հնադարեան Սրբավայրիս, հանդերձ համայն միաբանութեամբս՝ վերաւաքեցի առաջի Սեղանոյ Իջման Որդւոյն Աստուծոյ զաղօթս, վասն երկարակեցութեան և քաջառողջութեան թանկագին կենաց* Ձերդ Կայսերական Մեծութեան եւ Նորին Կայսերական Մեծութեան Ամենաբարեպաշտ Թագուհի Կայսերուհւոյ, *աղաչելով առ Տէրն*

Տերանց, պահպանել զԲրիստոսապատակ Կայսրդ ի վերայ Գահոյիցդ յամս յամայր՝ յերջանկութիւն բազմամիլիոն հպատակացդ և ի փառս Մեծին Ռուսիոյ։

Մկրտիչ Կաթուղիկոս
Ամենայն Հայոց.

Նորին Ս. Օծութիւն ազգիս Վեհափառ Հայրապետը շրջաբերական կոնդակաւ յանուն Կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսին, Կ. Պոլսոյ և Երուսաղէմի Ամեն. պատրիարքներին, որպէս և Եւրոպիոյ, Ամերիկայի, Պարսկ. և Հնդկաստանի և Ատրպատականի Առաջնորդներին, հրամայեց ներկայ յունիս ամսուն, ս. Էջմիածնի տօնի օրը, առանձին եկեղեցական հանդիսաւորութեամբ տօնել՝ իբրև Հայաստ. Կաթուղիկէ Մայր Տաճարի կառուցման և հաստատութեան հարար վեցհարիւրամեակի յիշատակ։

Ս. Սինոդի անդամ Գեր. Տ. Յուսիկ եպս.-ը իւր տկարութեան պատճառաւ հրաժարական մատուցած լինելով Ս. Հայրապետին, յայտնուեց այդ մասին ուր հարկն էր և բարձրագոյն հրամանաւ Սրբազանը ազատ համարուեց Սինոդի անդամութեան պաշտօնից։ Նա կմնայ ուրեմն այսուհետև միայն վանահայր ս. Հռիփսիմէի վանուց։

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Տ. Անտոն վարդապետ, որ վարել է գանձապան պաշտօնները թէ Մայր Աթոռում և թէ դրսի վանքերում,